ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հոկտեմբերի 2022 թվականի №___-Ա
ք. Երևան

«ԷԼԵԳԻՍ Հ.Է.Կ.» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի սեպտեմբերի 22-ի №350Ա որոշմամբ երկարաձգվել է «Էլեգիս Հ.Է.Կ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Հերմոն» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0221 լիցենզիայի գործողության ժամկետը, իսկ որոշման 2-րդ կետով Ընկերությունը պարտավորեցվել է երկամսյա ժամկետում՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 27-ը, Հանձնաժողով ներկայացնել Կայանի շահագործման համար անհրաժեշտ ճշգրտված ջրօգտագործման թույլտվություն, ինչը Ընկերության կողմից չի կատարվել, որի արդյունքում հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 13-ի №144-Ա որոշմամբ վերջինս նախազգուշացվել է, և 2021 թվականի սեպտեմբերի 22-ի №350Ա որոշման 2-րդ կետով սահմանված ժամկետը երկարաձգվել է ևս 2 ամիս ժամկետ՝ մինչև 2022 թվականի հունիսի 14-ը, սակայն Ընկերության կողմից տվյալ կետով սահմանված պարտավորությունը դարձյալ չի կատարվել,

բ) Հանձնաժողովը 2021 թվականի սեպտեմբերի 22-ի №350Ա որոշման 2-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով 2022 թվականի հունիսի 29-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 29-ի №ԳԲ/34.1-Մ4-3/2102-2022 գրությամբ,

գ) հարուցված վարույթի շրջանակում Ընկերությունը 2022 թվականի հուլիսի 1-ի գրությամբ հայտնել է, որ 2022 թվականի հունվարի 3-ի և 2022 թվականի հունիսի 9-ի գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն)՝ ջրօգտագործման թույլտվության մեջ առկա տեխնիկական վրիպակների շտկման և ճշգրտված ջրօգտագործման թույլտվություն ստանալու խնդրանքով, սակայն ընկերության բոլոր դիմումները մնացել են անպատասխան,

դ) Հանձնաժողովը 2022 թվականի սեպտեմբերի 23-ի №ԳԲ/34.1-Մ4-3/3328-2022 գրությամբ վարչական վարույթի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր կամ այլ տեղեկություններ ձեռք բերելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ փոխօգնության կարգով դիմել է Նախարարություն՝ Ընկերության կողմից «Հերմոն» փոքր հիդրոէլեկտրակայանի ջրօգտագործման թույլտվության ճշգրտման համար Նախարարություն դիմելու փաստի, ինչպես նաև շտկված ջրօգտագործման թույլտվության չտրամադրման պատճառների վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով,

ե) Հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 26-ի №376-Ա որոշմամբ կասեցվել է Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը՝ մինչև Հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 23-ի №ԳԲ/34.1-Մ4-3/3328-2022 գրությամբ հայցվող տեղեկատվությունը Նախարարությունից ստանալը,

զ) Ընկերությունը 2022 թվականի հոկտեմբերի 5-ի №05/10 գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել Կայանի շահագործման համար անհրաժեշտ ճշգրտված ջրօգտագործման թույլտվություն,

է) Նախարարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի №1/10.1.5/13402-2022 գրությամբ ստացվել է պահանջված տեղեկատվությունը, որի համաձայն՝ «Հերմոն» փոքր հիդրոէլեկտրակայանի ջրօգտագործման թույլտվությունում առկա անճշտությունների ճշգրտման և շտկման նպատակով Նախարարության աշխատակիցների կողմից իրականացվել են ջրօգտագործման թույլտվության պայմանների ուսումնասիրություն և զննություն, որի արդյունքում հստակեցվել են ջրառի և ջրահեռացման նիշերն ու կետերի կոորդինատները՝ Ընկերությանը տրամադրելով վերանայված №0190-22 ջրօգտագործման թույլտվությունը,

ը) 2022 թվականի հոկտեմբերի 11-ից վերսկսվել է Հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 26-ի №376-Ա որոշմամբ կասեցված վարչական վարույթը, ինչի մասին

Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 10-ի №ԳԲ/34.1-Մ2-5/3522-2022 գրությամբ,

թ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի №350-Ա որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին խախտել է հիշյալ որոշման 2-րդ կետի պահանջը, այն է՝ սահմանված ժամկետում չի ներկայացրել Կայանի շահագործման համար անհրաժեշտ ճշգրտված ջրօգտագործման թույլտվություն, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 10-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի №350Ա որոշման 3-րդ կետի պահանջի խախտման համար Ընկերությանը տուգանել 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ գումարի չափով:
2. Պարտավորեցնել Ընկերությունը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետով ամրագրված գումարը N900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ս. ԱՂԻՆՅԱՆ**

ք. Երևան
-- հոկտեմբերի 2022թ.